

Երբ արեան ճնշումը շատցած է, ինչ որ առաջին նշանն է պնդերակութեան, հետեւիլ սննդապահական հետեւեալ կանոններուն. — միս ուտել շաբաթը միայն երեք օր, երբեմն աւելի քիչ, հրաժարելով ուղեղէ եւ սեւ միսէ, հացը քիչ քանակութեամբ, առատ կանանչեղէն, կերակուրները շատ քիչ աղ պիտի պարունակեն: Իբրեւ ըմպելի՝ առտուն, ծոմ բերնով, մէկ գաւաթ ջուր, կամ պտուղ մը: Հրաժարիլ թէյէ, սուրճէ, ոգելից ըմպելիներէ, ախորժարեր հեղուկներէ, զինիէ: Միւս կողմէ մերթ ընդ մերթ բժշկական քննութեան ենթարկուիլ, ստուգելու համար երակներուն, երիկամներուն եւ ընդհանրապէս ներքին գործարաններուն վիճակը:

Այսպիսի կանոններով, եւ առանց գեղի, կարելի է կանխել պընդերակութեան հետեւանքները, որոնք այնքան ծանր են:

Բժ. Պ. ՔՕԼՕԼԵԱՆ

## ԵՐԲ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՆ ԵՆԹԱՐԿԵԼ ԵՐԸԽԱՆԵՐԸ

Զափազանց կարեւոր հարց մըն է այս, ե՞րբ կարելի է գործողութեան ենթարկել երախանները: Հարցումին պատասխանը կախում ունի երախային տարիքէն, բնախօսական պայմաններու կատարելութենէն և այլ կէտերէ:

Եւ սակայն կարելի է երկուքի բաժնել այն հիւանդութիւնները, որոնք կը պահանջեն անմիջական կամ յետագայ գործողութիւն:

Անմիջական գործողութեան պէտք է ենթարկել այն նորածինները որոնց 1) աղիքը, սրբանը գոց է, 2) ստամոքսին աղիքային անցքը սեղմուած է, 3) աղիքները իրարու մէջ անցած են: Ախտաճանաչումը անշուշտ բժիշկը միայն կրնայ ընել:

Յետագային գործողութեան ենթարկել այն մանուկները, որոնց տարիքը, կազմուածքը չի ներեր և վերոյիշեալ հիւանդութիւնները չեն ներկայացներ: Այդ պարագային, գործողութիւնը յետաճգելով հանդերձ, պէտք է լաւ քննել վիրաբուժութեան ենթարկուիք մասը, ընդհանուր վիճակը, ժառանգական հիւանդութիւնները, զանազան գործարանները, մէզը, աղիքներուն վիճակը:

Արդ, որո՞նք են այն հիւանդութիւնները, որոնց գործողութիւնը կարելի է յետաճգել.

Պորտային աղերափութիւն (*hernie ombilicale*). սպասել մինչեւ որ երախան 5-6 տարեկան ըլլայ: Մինչև այդ կապ (*bandage*) դնել:

Անուկային աղերափութիւն (*hernie inguinale*). սպասել մինչև որ երախան 3 տարեկան ըլլայ: Մինչև այդ՝ հսկել, շարունակ քննել

մորթը եւ կապ դնել։ Եթէ աղեթափութիւնը աննշան է, յաճախ կրնայ ինքնին անհետանալ։

Երբ աղեթափութիւնը շատ մեծ է, և պահաժամ՝ անբաւական, սպասել գէթ մինչև մէկ տարեկանը և գործողութեան ենթարկել։

Իսկ երբ աղիքը ներս կարելի չէ մտցնել (*irréductible*), ամէնէն ուշը 8-12 ամիսներուն ընթացքին կատարել գործողութիւնը։

Միզանցի անբնական բացուածք (*hypoprosplasias*), գործողութեան ենթարկել 6-8 տարեկանին։

Ամորձիցները վար չեն իջած (*ectropie testiculaire*), գործողութիւնը կատարել 6 տարեկանէն յետոյ։

Ամորձիցներու ջրափուը (*hydrocèle*) ինչ՝ տեսակ որ ըլլայ, գործողութիւնը կատարել 2 տարեկանէն յետոյ։

Թլիատի նեղութիւնն եւ բորբոքում (*phimosis*) գործողութիւնը կատարել 8րդ ամիսէն ետք, եթէ բժշկական դարմանումը արդիւնք չէ տուած եւ եթէ երախային ընդհանուր վիճակը կը ներէ։

Շրբնահերձութիւնը (*bec-de-lièvre*) եթէ թիթե է, գործողութիւնը կատարել 6րդ ամիսէն յետոյ, եթէ շեշտուած է՝ 12րդ ամսուն։ Ամէն պարագայի, գործողութիւնը պէտք է կատարուի, դեռ երախան լեզու չելած։

Ազդոսկրին ի ծնե խախտումը (*luxation congénitale de la hanche*) շտկել և «ալչի»ի մէջ առնել 18րդ ամիսէն սկսեալ մինչև 2 տարեկան դառնալը, դեռ քալելու չօկսած։

Ծուռ ոսքերը (*pieds bots*), շտկելու սկսիլ 10րդ օրուընէ սկսեալ։ Եթէ անդամալուծութեան հետեւանք են, միայն բժշկական դարմանում ընել։ Գործողութիւնը, երբ պէտք է, 12 տարեկանին։

Իսկ նշիկները եւ մսաբույսերը (*amygdales et végétations*) 4 տարեկանէն յետոյ, անշուշտ երբ գործողութեան պահանջ զգացուի։

Այս է կարծիքը Փարիզի հիւանդանոցներու բժիշկներէն աքթ։ Մարթէնի, զանազան հիւանդութեանց ընթացքին մանու կներու գործողութեան ենթարկուելու ժամանակին մասին։

### ԲԺ. Ե. ՄԻՆԱՍԵՍՆՑ

Շիլ ԱԶքերը. — Ակնաբոյժ տոքթ, *Cantonnier* կ'ըսէ թէ, անկարելի է աչքի մարզանքով (*rééducation*) դարմանել շիլ (շաշի) աչքերը. —

1.— զեց կամ եօթը տարեկանէն վար տղոց մօտ։ 2. — 36—38 տարեկանէն վեր մարդոց մօտ։ 3.— Անոնց մօտ որոնք աչքերը շըտ կելու մարզանքին կանոնաւորաբար հետեւելու ժամանակ չունին։ 4. — Որ բթամիտ են եւ ապուշ։ 5.— Որ աչքի դնդերներու անդամալուծութիւն ունին։ 6. — Որ 40 աստիճան շեղում մը կը ներկայացնեն լէպի ներս։

Շիլ աչքերը կը դարմանուին 70 առ հարիւր աչքի յատուել մարզանքներով, եթէ ենթասկաները կամք ունին։ 30 առ հարիւրը պէտք է գործողութեան ենթարկել։